ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Բարեկամության հրապարակ 1 հասցեում տեղադրված մարզասարքերի հարթակի ռետինե հատակի իրականացման աշխատանքների ձեռքբերման նպատակով «ԱԲՀ-ԳՀԱՇՁԲ-26/46» ծածկագրով գնանշման հարցումով կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Աբովյան

20/03/2026թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի՝
Նախագահ՝ Ա. Չոբանյան (ԳՊ/ԳԱՊ)
Անդամներ՝ Լ. Իսահակյան (ԳՊ/ԲԱ), Լ. Շառաջյան (ԳՊ/ԳԱ), Ա. Առուշանյան (ԳՊ/ԳԱ), Կ.Փարսյան (ԳՊ/ԲԱ)
Քարտուղար՝ Գ. Միսակյան (ԳՊ/ՄՀՄ)

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին
Ա. Չոբանյան

Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Խաղաղության փողոց 3 հասցեում քաղաքային այգու կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԱԲՀ-ԲՄԱՇՁԲ-26/46» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հրավերի վերաբերյալ 2026թ. մարտի 19-ին ստացվել է հետևյալ պարզաբանման հարցումը.

Խնդրում ենք տալ պարաբանում, ծավալաթերթում պահանջվող ռետինե մանրահատիկը պետք է լինի երկրորդային հումքից պատրաստված,թե EPDM (կաուչուկային ռետին)

Գնահատող հանձնաժողովի կողմից, ուսումնասիրելով պարզաբանման հարցումը, որոշվեց տալ հետևյալ պարզաբանման պատասխանը՝

Ի պատասխան Ձեր հարցման՝ հայտնում ենք, որ ծավալաթերթով նախատեսված ռետինե հատակի նյութին ներկայացվող պահանջները սահմանված են տեխնիկական և որակական բնութագրերով, մասնավորապես՝

- ***գույնը՝ RAL 2007 (Luminous bright orange),***
- ***հաստությունը՝ 2 սմ,***
- ***կազմը՝ 90% ռետինե մանրահատիկ, 10% պոլիուրեթանային կապակցիչ և պիգմենտային ներկ,***
- ***գունավորումը՝ ամբողջ հաստությամբ՝ մեկ միասնական գույնով,***
- ***խտությունը՝ 850-1000 կգ/մ³:***

Ուստի ընդունելի կհամարվի այն առաջարկը, որի շրջանակում առաջարկվող նյութը լիովին կհամապատասխանի ծավալաթերթով սահմանված վերոնշյալ տեխնիկական և որակական պահանջներին՝ անկախ նրանից այն պատրաստված է երկրորդային հումքից, թե EPDM՝ (կաուչուկային նյութերից) նյութից:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

Հանձնաժողովի նախագահ՝		Ա. Չոբանյան
Անդամներ՝		Լ. Իսահակյան
		Լ. Շառաջյան
		Ա. Առուշանյան
		Կ.Փարսյան
Համակարգող՝		Գ. Միսակյան